առնում աղջկան, որը իւր հետ առած է լինում իւր բոլոր զարդերը, և փախչում։ Եթէ աղջկայ ծնողները շուտ են իմանում այս, խկոյն մի քանի ձիաւորներ հետևում են նրանց և եթէ հասնում են, տեղի է ունենում մի կատաղի կռիւ, որի ընթացքում երբեմն մարդիկ էլ են սպանւում։ Եթէ չեն կարողանում աղջիկը յետ խլել, տղան տանում է նրան մի ուրիշ գիւղ, իւր մի բարեկամի տուն։ Անմիջապէս աղջկայ հայրը յայտնում է մարմնաւոր և հոգևոր իշխանութիւններին, որոնք աղջկան կանչում, հարցաքննում են։ Եթէ աղջիկը խոստովանում է, որ իւր ազատ կամքով է փախել երիտասարդի հետ, նրանց թոյլ են տալիս պսակուելու, իսկ եթէ ոչ, բաժանում են. աղջկան վերադարձնում են հօրը, իսկ տղային պատժում պետական օրէնքներով։ Երբեմն պատահում է, որ երիտասարդը փախցնում է աղջկան, առանց նրա համաձայնութիւնն առնելու. այսպիսի դէպքերում հազիւ է պատահում, որ աղջիկը չգիջէր երիտասարդի ու նրա բարեկամների աղաչանքներին՝ յայտնելու թէ իւր կամքովն է փախել։ Փախցրած և վերադարձուած աղջիկը հասարակութեան մէջ յարգանք չվայելելով՝ թշուառ աղջիկները նոյն իսկ ակամայից համաձայնւում են ամուսնանալու փախցնողի հետ [1])։

Բորչալուի գաւառում առևանգումը տեղի է ունենում, երբ աղջկայ ծնողները համաձայն չեն լինում տալու իրենց աղջիկը նրա վրայ սիրահարուած երիտասարդին և երբ վերջինիս ծնողները չեն կամենում առնել նրա սիրած աղջիկը։ Առաջին դէպքում սիրահարուած երիտասարդը հաւաքելով իւր ընկերներին փախցնում է աղջկան։ Ընկերներից մինը մի յարմար տեղ գտնելով աղջկան, բռնում է նրա ձկոյթ մատը, կոճիկները ծալում և հուպ տալիս. աղջիկը ցաւից ստիպուած վազում է երիտասարդի յետևից, մինչև որոշեալ տեղը, ուր թաք կացած ձիաւոր սիրահարը առնում է նրան ձիու վրայ և չափ ընկնում [2])։ Այս տե-

[1]) Ե. Լալայեանի՝ Վարանդա. եր. 117—118.

[2]) Ազգ. Հանդէս, գիրք IX, 1902 Բորչալուի գաւառ, եր. 215.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան